Կարգապահական գործ թիվ ԿԳ-21025

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի փետրվարի 08-ի թիվ 6-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/03-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Պավել Գյուլումյանի, Խորհրդի անդամներ՝ Գայանե Դեմիրչյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սամվել Լևոնիկի Մելիքյանին (արտոնագիր՝ 1321) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Վասիլ Դավիթի Սահակյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ փաստաբան Սամվել Մելիքյանը **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** ստանձնել է իրեն փաստաբանական ծառայություն մատուցելու պարտավորություն, սակայն բարեխիղճ կերպով չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունը: Մասնավորապես, վերջինս իր իրավունքների պաշտպանության նպատակով վերաքննիչ բողոք է ներկայացրել, սակայն այն ուշացումով ներկայացնելու հետևանքով բողոքը մերժվել է: Դիմողը նաև հայտնել է, որ Փաստաբանից պահանջել է վերադարձնել իր կողմից վճարված, փաստաբանական հոնորար հանդիսացող գումարը, սակայն վերջինս հրաժարվում է վերադարձնել այն:

Դիմումին կից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել են նաև Փաստաբանի կողմից ներկայացված Վերաքննիչ և Վճռաբեկ բողոքների պատճենները, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման պատճենը, վճռաբեկ դատարանի բողոքը վերադարձնելու մասին որոշումը ուղեկցական գրությամբ և մի շարք այլ փաստաթղթեր:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 25.10.2021թ. թիվ 251-Ա/ԿԳ-21025 որոշման հիման վրա փաստաբան Սամվել Լևոնիկի Մելիքյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.1 և 2.7.2 ենթակետերի խախտման հատկանիշներով:

29.10.2021 թվականին կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Զոյա Սակովային (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողը ներկայացել է կարգապահական գործով նիստին, և ըստ էության վերահաստատել Դիմումով իր կողմից ներկայացված դիրքորոշումը:

<u>3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը նախապատրաստողին բացատրություն է ներկայացրել, որով հայտնել է, որ 17.12.2019 թվականին Դիմողի հետ կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Նա նշել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 16.09.2020 թվականին կայացված որոշմամբ Վ. Սահակյանի բողոքը մերժվել է, իսկ որոշումն իրենց չէր ուղարկվել, այն ուղարկվել է միայն իր ներկայացրած դիմումների հիման վրա՝ փոստային ծառայության կողմից այն իրեն է հանձնվել 06.02.2021 թվականին: Փաստաբանը հայտնել է, որ դատարանի որոշումը ստանալուց հետո՝ 15.02.2021 թվականին, ինքը ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 05.03.2021 թվականին ժամկետանց լինելու

պատճառաբանությամբ կայացրել է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում: ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 19.04.2021 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացրելու համար սահմանելով 20-օրյա ժամկետ:

Փաստաբանը նշել է, որ 2021 թվականի ապրիլի 25-ին կամ 26-ին հանդիպել է Դիմողին, ծանոթացրել Վճռաբեկ դատարանի որոշմանը, որի ժամանակ Դիմողը խնդրել է գործը թողնել իր մոտ: Փաստաբանն իր մոտ եղած գործի նյութերը թողել է նրա մոտ՝ միաժամանակ հայտնելով, որ ժամկետի խնդիր չունենալու համար ամենաուշը մեկ շաբաթից պետք է գործը հետ ուղարիկի իրեն, որպեսզի վճռաբեկ բողոքը կրկին ուղարկի դատարան:

Փաստաբանն իր պատճառաբանություններում նախաքննական մարմնի կողմից կայացված՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը դիտարկել է որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ որպես դրա բողոքարկման ժամկետ դիտարկել ոչ թե տասնօրյա, այլ մեկամսյա ժամանակահատվածը: Արդյունքում վերջինս նշել է, որ իր կողմից բողոք ներկայացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետը պահպանվել է:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 21.12.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ 10.01.2022 թվականին փաստաբան Սամվել Մելիքյանը ներկայացրել է առարկություն՝ ըստ էության անհամաձայնություն հայտնելով Նախապատրաստողի կողմից եզրակացության մեջ կատարված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների վկայակոչման հետ, ինչպես նաև հավելելով, որ վճռաբեկ բողոքը կրկին չի ներկայացվել, քանի որ Դիմողը հրաժարվել է իրեն գործի նյութերը վերադարձնելուց՝ հրաժարվելով իրենց միջև կնքված պայմանագրից:

23.12.2022թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 18.01.2022թ. ժամը 19:00-ին և 08.02.2022թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի **(այսուհետ՝ նաև Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. Փաստաբանի և Դիմողի միջև 17.12.2019 թվականին կնքվել է պայմանագիր, որով Փաստաբանը պարտավորվել է փաստաբանական ծառայություն մատուցել Դիմողին: *Սույն փաստը հաստատվում է 17.12.2019թ. պայմանագրով* ***(այսուհետ՝ Պայմանագիր):***

2. Պայմանագրով արձանագրվել է.

«1. Սույն պայմանագրով «Կատարողը» պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ, վերջինիս կողմից տրված և սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող լիազորագրի շրջանակներում մատուցել իրավաբանական ծառայություններ, միաժամանակ ՀՀ դատարաններում հանդես գալ պատվիրատուի շահերի պաշտպանությամբ:

1.2. Սույն պայմանագրով կատարողը թիվ ԵԴ/0682/11/19 քրեական գործի շրջանակներում իրականացնում է տուժողի շահերի պաշտպանությունը:

1.3. Տալիս է իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև մատուցում է իրավաբանական բնույթի այլ ծառայություններ»:

3. Դիմողի կողմից 04.12.2019 թվականին Փաստաբանին տրամադրվել է լիազորագիր: *Սույն փաստը հաստատվում է գործի նյութերում առկա՝ լիազորագրի պատճենով*

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 05.03.2021 թվականի որոշմամբ թիվ ԵԴ/0682/11/19 գործով դիմող Վասիլ Սահակյանի ներկայացուցիչ Սամվել Մելիքյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: *Սույն փաստը հաստատվում է գործի նյութերում առկա՝ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման պատճենով:*

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի գրասենյակի կողմից կազմված արձանագրության համաձայն՝ 2021 թվականի փետրվարի 26-ին էլեկտրոնային փոստի միջոցով նույն դատարան է ստացվել դիմողի ներկայացուցիչ Ս.Մելիքյանի վերաքննիչ բողոքը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 16.09.2020 թվականի՝ թիվ ԵԴ/0682/11/19 գործով որոշման դեմ: Վերաքննիչ բողոքում նշված է, որ կից ներկայացվում է դատարանի որոշումը փոստային ծառայության կողմից ստանալու ապացույց փոստային ծրարը, սակայն այն փաստացի կցված չէ: *Սույն փաստը հաստատվում է գործի նյութերում առկա՝ արձանագրության պատճենով:*

6. ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2021 թվականի որոշմամբ թիվ ԵԴ/0682/11/19 գործով դիմող Վասիլ Սահակյանի ներկայացուցիչ Սամվել Մելիքյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է: *Սույն փաստը հաստատվում է գործի նյութերում առկա՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճենով:*

7. Փաստաբան Սամվել Մելիքյանի կողմից 15.02.2021 թվականին փոստային առաքանի է ուղարկվել ընդհանուր իրավասության դատարան՝ ք.Երևան, Տիգրան Մեծ 23 հասցեով:

Սույն փաստը հաստատվում է գործի նյութերում առկա փոստային անդորրագրով:

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սամվել Մելիքյանի (արտոնագիր 1321, ստացված՝ 25.04.2012թ.) նկատմամբ 2018-2021 թվականներն ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել՝ չհաշված սույն կարգապահական գործը:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, լսելով Դիմողի և փաստաբանի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Սամվել Մելիքյանը թույլ է տվել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1 և 2.7.2 ենթակետերի խախտում և ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

1) *ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր*

միջոցներով ու եղանակներով.

2) *պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

ՄԱԿ-ի կողմից ընդունված Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետի համաձայն՝ *փաստաբաններն իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության իրականացմանը նպաստելիս (...) պարտավոր են մշտապես գործել ազատ և բարեխիղճ՝ օրենքի և փաստաբանի մասնագիտության ճանաչված չափորոշիչների և էթիկայի համաձայն*:

Նույն սկզբունքների 15-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները պետք է մշտապես լինեն լոյալ իրենց վստահորդների նկատմամբ և հարգեն իրենց վստահորդների շահերը*:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպանի և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հեղինակությունը: Թե՛ Կանոնագիրքը և թե՛ վերը մեջբերված միջազգային իրավական ակտում ամրագրված դրույթները պարտավորեցնում են փաստաբանին վստահորդին մատուցել պատշաճ և ժամանակին փաստաբանական ծառայություն՝ ըստ էության դիտարկելով որպես մասնագիտական բարեխղճության և ջանասիրության բաղադրատարր: Ավելին՝ Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետով փաստաբանների մասնագիտական բարեխղճության չափանիշ է համարվում ներպետական օրենսդրությամբ փաստաբանի վրա դրված չափանիշներն ու էթիկայի նորմերը պահպանելը և կատարելը: Տվյալ պարագայում այդպիսիք սահմանված են Օրենքով և Կանոնագրքով:

Մասնագիտական բարեխղճության սկզբունքի խախտում է հանդիսանում փաստաբանի ցանկացած այնպիսի վարքագիծ, որը դրսևորվում է վստահորդին

փաստաբանական ծառայության ոչ բարեխիղճ մատուցմամբ՝ այդ թվում նաև օրենսդրության չիմացության արդյունքում:

Միևնույն ժամանակ, Կանոնագրքի 2.7.2 ենթակետի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի մասնագիտական բարեխղճությունը ներառում է մի շարք բաղադրիչների միաժամանակյա առկայություն.

- *իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,*
- *վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն,*
- *հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Վերոգրյալ դրույթների իրավակարգավորումները գնահատելով սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում՝ Խորհորդը հաստատված է համարում այն փաստը, որ Փաստաբանի և Դիմողի միջև 17.12.2019 թվականին կնքվել է պայմանագիր, որով Փաստաբանը պարտավորվել է փաստաբանական ծառայություն մատուցել Դիմողին: Նույն պայմանագրի համաձայն՝ փաստաբանը պարտավորվել է Դիմողի տրամադրած լիազորագրի շրջանակներում մատուցել իրավաբանական ծառայություններ, միաժամանակ ՀՀ դատարաններում հանդես գալ պատվիրատուի շահերի պաշտպանությամբ: Պայմանագրով փաստաբանի պարտավորությունները ներառել են թիվ ԵԴ/0682/11/19 քրեական գործի շրջանակներում տուժողի շահերի պաշտպանության իրականացումը, իրավաբանական խորհրդատվություն տալը, ինչպես նաև իրավաբանական բնույթի այլ ծառայությունների մատուցումը: Դիմողի կողմից 04.12.2019 թվականին Փաստաբանին տրամադրվել է լիազորագիր:

Մինչդեռ, սույն գործի նյութերից հետևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 05.03.2021 թվականի որոշմամբ թիվ ԵԴ/0682/11/19 գործով դիմող Վասիլ Սահակյանի ներկայացուցիչ Սամվել Մելիքյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Ավելին, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի գրասենյակի կողմից կազմված արձանագրության համաձայն՝ «*2021 թվականի փետրվարի 26-ին էլեկտրոնային փոստի միջոցով նույն դատարան է ստացվել դիմողի ներկայացուցիչ Ս.Մելիքյանի վերաքննիչ բողոքը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 16.09.2020 թվականի՝ թիվ ԵԴ/0682/11/19 գործով որոշման դեմ*: Վերաքննիչ բողոքում նշված է, որ կից ներկայացվում է դատարանի որոշումը փոստային ծառայության կողմից ստանալու ապացույց փոստային ծրարը, սակայն այն փաստացի կցված չէ»:

Վերոգրյալի արդյունքում Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանը, Դիմողի հետ կնքած պայմանագրի շրջանակներում կրելով նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 16.09.2020 թվականի թիվ ԵԴ/0682/11/19 գործով որոշման դեմ վերաքննիչ

բողոք ներկայացնելու պարտականություն, օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել նույն գործով վերաքննիչ բողոք: Մասնավորապես, սույն կարգապահական գործի քննության ընթացքում չի ներկայացվել որևէ փաստարկ կամ ապացույց, որը հիմք կհանդիսանար նման հանգամանքը հերքելու համար: Ընդ որում, անգամ փաստաբանը կարգապահական գործով նիստի ընթացքում չի ներկայացրել իր կողմից օրենքով սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացված լինելու վերաբերյալ որևէ փաստարկ (*կարգապահական գործի նյութերում առկա է միայն փաստաբան Սամվել Մելիքյանի կողմից 15.02.2021 թվականին ընդհանուր իրավասության դատարան՝ ք.Երևան, Տիգրան Մեծ 23 հասցեով, փոստային առաքանի ուղարկված լինելը հավաստող փոստային անդորրագիր*):

Ավելին, ինչ վերաբերում է փաստաբանի այն փաստարկմանը, որ նախաքննական մարմնի կողմից կայացված՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերջինս դիտարկել է որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ որպես դրա բողոքարկման ժամկետ դիտարկել ոչ թե տասնօրյա, այլ մեկամսյա ժամանակահատվածը, ուստի իր կողմից բողոք ներկայացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետը պահպանվել է, ապա այն ամբողջությամբ անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ *վերաքննիչ բողոք բերվում են (…) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում (…) առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում*:

Նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ և 10[1]-րդ կետերի համաձայն՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը. *(…)* ***վերջնական որոշում***՝ *քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության. (…)* ***գործն ըստ էության լուծող դատական ակտեր***՝ *առաջին ատյանի դատարանի դատավճիռ, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտեր, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, բողոքարկման համար մեկամսյա ժամկետ նախատեսել է գործն ըստ էության լուծող դատական ակտերի համար՝ սպառիչ թվարկելով նման դատական ակտերի տեսակները: Իսկ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող քրեական դատավարության օրենսգրքով դիտարկվում է որպես վերջնական որոշում, իսկ դրա բողոքարկման արդյունքում առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումը՝ ոչ թե գործն ըստ էության չլուծող դատական ակտ է, որի համար սահմանված է բողոքարկման տասնօրյա ժամկետ:

Սույն գործի փաստերի համաձայն, ինչպես նշել է փաստաբանը, իր վստահորդի դատական պաշտպանության իրավունքը ենթադրաբար խախտվել է նախաքննական մարմնի կողմից կայացված՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ, որը որևէ կերպ չի կարող վերոգրյալ դրույթների իմաստով դիտարկվել որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ, և դրա բողոքարկման համար չի կարող կիրառելի լինել 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետը:

****

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, այն իրավական հետևանքները, որ առաջացել են փաստաբանի կողմից կարգապահական խախտումը թույլ տալու արդյունքումինչպես նաև փաստաբան Սամվել Մելիքյանի անձը բնութագրող հանգամանքները: Խորհուրդը հատկապես առանձնացնում

է այն հանգամանքը, որ կարգապահական խախտման արդյունքում Դիմողը զրկվել է իր վերաբերյալ կայացված որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունից:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սամվել Լևոնիկի Մելիքյանին (արտոնագիր թիվ 1321) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1 և 2.7.2 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Սամվել Լևոնիկի Մելիքյանի (արտոնագիր թիվ 1321) նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Պավել Գյուլումյան

08 փետրվարի 2022թ.
թիվ ԿԳ/03-Ա
ք. Երևան